Նուբար Փաշայի անվան հիմնադրամը՝ մասնավոր հիմնադրամ է, որը ստեղծվել է հայ ուսանողներին օգնելու համար:
Այս հիմնադրամը հայ ուսանողների համար է, որոնք ուզում են ներկայացնել իրենց դոկտորական թեզը կամ սովորել որևիցե լրացուցիչ մասնագիտություն Եվրոպական համալսարաններում:
Այդ կազմակերպությունը տարեկան 2 հազար եվրոյի չափով օգնություն է տրամադրում այն ուսանողներին, որոնք արդեն ունեն մաստեր II կոչում, կամ միջինից բարձր ցուցանիշներ:
Դոկտորական թեզը պետք է ավարտվի երկու հաջորդական տարիների ընթացքում:
Պահանջը պետք է գրված լինի անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներով, ուղարկվի հիմնադրամի քարտուղարություն՝ դիպլոմների պատճեններով:
Փաստաթղթերը ընդունելուց հետո,ուսանողներին կուղարկվեն համապատասխան հարցաթերթիկներ:
Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ուղարկվեն հիմնադրամի քարտուղարություն մինչև մայիսի 1-ը:
Հիմնադրամի վարչական կազմը բաղկացած է Նուբար Փաշայի երկու հետնորդներից, երկու համալսարանի պրոֆեսորներից և երեք հայերից :
Նրանք հավաքվում են ամեն տարվա հունիսի 15-ին և որոշում է տրամադրել լրացուցիչ աջակցություն լավագույն թեկնածուին:
Հատուկ ուշադրություն կդարձվի այն ուսանողներին, որոնց աշխատանքները նվիրված կլինեն Հայաստանին և հայկական մշակույթին:
Հիմնադրամի որոշումները վերջնական են և բեկման ենթակա չեն:
Որևիցե սխալ լրացված կամ կեղծված փաստաթղթերի դեպքում ուսանողը պետք է վերադարձնի ստացված գումարը:
Հիմնադրամի իրեն իրավունք է վերապահում զրկելու ֆինանսավորումից այն ուսանողներին, որոնք իրենց լավ չեն դրսևորել:
Կազմակերպության որոշումը կայանում է ուսանողի կողմից տրված բացատրություններից հետո և բեկման ենթակա չէ:
Ուսանողը պարտավորվում է իր աշխատանքի մեկ օրինակը ուղարկի հիմնադրամի քարտուղարությանը, ինչպես նաև պետք է հաստատի ինչքան դրամ են ստացել, կամ վերադարձնի ուրիշ ուսանողներին օգնելու համար:

Fondation Boghos Nubar Pacha
Œuvre des boursiers arméniens
Avenue Louise, 192
B – 1050 Bruxelles